ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԲՆԱԿ ԻՐ ՍԱՆԵՐԻ ՀԵՏ

Ավանդություն դարձած ամենամյա այս հանդիպումը տեղի ունեցավ սույն թվականի փետրվարի 18-ին: Մայր Աթոռ Էին եկել Վեհարան Հայրապետի հայրենաբնակ ռումինահայ նախկին սաներ, թվով շուրջ 50 հոգի, գլխավորությամբ պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Բոլանջյանի: Նրանք եկել էին կարոտով և անհուն բերկրանքով կրկին տեսնելու իրենց երբեմնի սիրելի ուսուցչին, լսելու նրա հորդորները, ստանալու նրա հայրական օրհնությունները:

Վեհարանի իր ընդունարանում Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունեց իր հոգևոր զավակներին և բարի գալուստ մաղթեց նրանց: Ապա բոլոր սաները իրենց անկեղծ ու սրտագին շնորհավորանքը հայտնեցին Նորին Սրբությանը նրա ծննդյան 75-ամյակի, քահանայագործության 40-ամյակի և գահակալության 28-րդ տարեդարձի կապակցությամբ:

Հայոց Հայրապետի՝ աշխարհով մեկ ցրված հայրարավոր երախտագետ աշակերտների անունից հանդես եկավ պրն. Սուրեն Բոլանջյանը Նորին Սրբությանն ուղղված հետևյալ սրտառուչ ուղերձով:

«Թանկագին մեր ուսուցիչ՝ Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետ Ամենայն Հայոց,

Անցյալ աշնանը համայն հայությունը արժանավայել կերպով նշեց Ձերդ Սրբության ծննդյան 75-ամյակը, հոգևոր կոչման 40-ամյակը և հայրապետության 28-րդ տարեդարձը:

Թեև բավականին ուշացումով, սակայն սրտի անհուն բերկրանքով՝ ի Հայաստան և ի սիրուս աշխարհի ցրված Ձերդ Սրբության հայրարավոր երախտագետ աշակերտների անունից թույլ տվեք մատուցել մեր որդիական խոնարհագույն զգացումները և անկեղծ շնորհավորությունները Ձեր նոպակ հոբելյանների առթիվ: Այսօր պատմական և հիշարժան տոնական օր է մեզ համար, քանի որ Բուխարեստի երբեմնի «Միսաքյան» ազգային վարժարանի Ձեր նախկին սաները անհուն երախտագիտությամբ, ինչպես Ձեր նախորդ հոբելյանների ժամանակ, եկել են հայության սրբություն սրբոցը հանդիսացող Ս. Էջմիածնի նվիրական հարկի տակ արտահայտելու իրենց սրտի խոսքը և բացառիկ ուրախությունը:

Ձերդ Սրբության բովանդակ կյանքը բացառիկ նվիրաբերումի մի օրինակ է՝ նվիրված հայեցի ուսման և կրթության գործին, Հայ Եկեղեցուն և առհասարակ բովանդակ հայ ժողովրդին: Ձեր աչքերը բանալով ուղիղ երեք քառորդ դար առաջ հյուրընկալ Ռումինիայի քաղաքամայր Բուխարեստում, ուր դարեր շարունակ արհավիրքներից փախչող շատ հայեր միշտ էլ ապաստան են գտել, Դուք, լինելով համիդյան ջարդերից ապատված բարեպաշտ ծնողների զավակ, ամենից առաջ նրանցից ժառանգեցիք ջերմ հայրենասիրություն: Ձեր երջանկահիշատակ հայրը իր աջակցությունն էր բերել Բուխարեստի հայոց դպրոցի վերաբացման կարևոր գործին, իսկ Ձեր առաքինազարդ մայրը՝ անմոռանալի Տիրամայրը, իբրև մատաղ սերնդի դաստիարակ և ռումինահայ մտավոր աշխատակից, խոր հետք է թողել Ձեր սրտում և հոգում:

Ձեր ստացած բարձր ուսման և ռումինահայ մտավորականության հետ ունեցած կապերի շնորհիվ Դուք շատ վաղ հասակում բրծվեցիք համամարդկային և ազգային զգա-

ցումներով: Ձեր կյանքի առաջին շրջանը ամբողջությամբ նվիրաբերվեց Ձեզ ծնող ռումինահայ գաղութի ազգային հասարակական և եկեղեցական կյանքի կարգացմանը: Դուք այդ ժամանակ Ձեր կարևոր նպաստը բերեցիք հայ գաղութի գոյատևման երկու միջնաբերդերի՝ հայ դպրոցի և հայ մշակույթի ամրապնդման գործին: Մեր դպրոցի կամարների տակ է, որ Դուք մեկ սովորեցրիք սիրել հայ լեզուն, սիրել մեր ժողովրդին, պատգամեցիք հայ ապրել: Դուք սիրվեցիք ռումինահայ գաղութի ծոցում նաև Ձեր ազգային-հասարակական գործունեությամբ՝ լինելով ժրաջան ղեկավարներից մեկը «Հ. Մ. Ը. Մ.»-ի, «Ուսանողական միության», «Հայ մշակույթի բարեկամների ընկերակցության» և մշակութային այլ կազմակերպությունների: Շատ էին փնտրված Ձեր զեկուցումները «Սանուց միություն»-ում և այլուր, ինչպես նաև հուսիչ արտասանությունները կարևորագույն հանդիսությունների ընթացքում: Ձեր թարգմանությունների միջոցով Դուք Ձեր լուման էիք մուծել բազմավաստակ հայագետ Հ. Ճ. Սիրունիի «Անի» ռումիներեն հայագիտական հանդեսին, որ բացառիկ դեր է ունեցել հայ-ռումինական գիտական կապերի պատմության մեջ:

Հայ գիրը Ռումինիայում տարածելու անհուն ցանկությունից մղված՝ Դուք ընդգրկվեցիք հայ հրապարակագրության մեջ և Ձեր սերնդակից գրչեղբայրների հետ անտեսելով այլ լեզվով պարբերական հրատարակելու հնարավորությունը, անցաք «Հերկ» երիտասարդական ամսագրի (1937) խմբագրմանը և հրատարակմանը: Հատկապես անհրաժեշտ է նշել Ձեր մտքի արգասիքը հանդիսացող «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» (1940), «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» (1943) գրքերը, ինչպես նաև Ձեր բազմաթիվ խմբագրականները, հոդվածները և նշմարները: Այս առումով հիշատակման արժանի ենք համարում այժմ շատ հազվագույտ եղող և դեռևս 1941 թ. դեկտեմբերին Բուխարեստի «Հայ մամուլ» թերթում Ձեր հրատարակած խմբագրականը, որը օտարության մեջ գրված սփյուռք-հայրենիք կապի լավագույն արտահայտություններից մեկը կարելի է համարել: Այդ առաջնորդող հոդվածում Ձերդ Սրբությունը 43 տարի առաջ գրել է. «Հոն հեռուն տուն մը ունինք մենք: Մեզի համար ամեն ինչ է ան: Ամբողջ աշխարհ մըն է կենդանի: Ան քար է, լույս և արյուն: Ու տեսիլքը Մեսրոպին: ...Քանի՜-քանի ռնգամներ ուզեցին անոր լույսը մարել... Ամեն անգամ սակայն, Մեսրոպին տեսիլքը հաղթանակեց: Ան եղավ և՛ քար, և՛ լույս, և՛ արյուն ու մեր տունը մնաց կանգուն, լուսավոր և կենդանի...: Մեր նոր սերունդին հոգիին մեջ ալ ճառագայթ մը ցաթեցնենք Հայոց աշխարհին տեսիլքեն ու հայ հոգիներու իդեալներեն: Միայն այսպիսով պիտի կարենանք կենդանի ու կորովի մնալ: Ու պետք է մնանք, մինչև մեր փակ բախտին դուռը բացվի: Որովհետև հոն հեռուն տուն մը ունինք, որ անձկալի մեկ կպպասե: Հե՜ դուն, Հայո՛ց աշխարհ, մեր այս կորսված անկյունեն մեր ողջույնը ընդունե»:

Ճշմարիտ հայրենասիրությամբ առլեցուն Ձեր այս պատգամները հույսի և լույսի փարոսներ էին պատերազմի արհավիրքները ապրող և հայրենիքից այն ժամանակ կտրված մեր սերնդի համար:

Ձեր դասերի և գրվածքների մեջ դրված էր ոչ միայն Ձեր հմտությունը, այլև Ձեր անուշ հոգին, անսպառ եռանդը, հավատը հայոց ապագայի նկատմամբ: Հավատացեք, Վեհափառ Տեր, որ տասնամյակներ հետո դեռ այսօր էլ Դուք շարունակում եք մնալ մեր սրտերում մեր անփոխարինելի ու շատ սիրելի «Պարոն Պալճյանը»:

Սակայն հայանվեր Ձեր նվիրաբերումները ավելի մեծ փայլատակումներ էին նախասահմանված: 1942 թ. վախճանվեց ռումինահայ թեմի առաջնորդ Հուսիկ արքեպ. Զորհապյանը առանց իր հաջորդը թողնելու: Եվ ահա հանկարծ ռումինահայ թեմի հաջորդության հարցի անորոշ և անլուծելի համարված շրջանում, Դուք, ընդառաջելով բովանդակ հայ համայնքի ցանկությանը, կրոնավորի սքեմը ընդունեցիք: Նվիրումի և ինքնապրհաբերման նոր մի շրջան էր սկսվում Ձեզ համար: Ձեռնադրվելով Աթենքում և Ձեր վարդապետական քառասունքն անցկացնելով Սուչավայի հինավուրց հայկական Հաճկատարի վանքում՝ Դուք դարձաք արժանավոր հոգևոր առաջնորդը ռումինահայ թեմի: Ձեր ձեռներեցությամբ, անբասիր կյանքով և Ձեր ծավալած գործունեությամբ բարձրացրիք հայ անունը հաչս օտար եկեղեցիների և պետական մարմինների:

Շուտով նոր հորիզոններ էին բացվելու Ձեր կյանքի համար: Վախճանվել էր Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նա իր մահվան անկողնում աղերսել էր մեծ հառաչանքով. «Մեղք է Սուրբ Էջմիածինը...»: Անսալով այդ մեծ կոչին, վայելելով համայն հայ ժողովրդի համակրանքն ու սերը՝ Հայ Ազգային Եկեղեցական Ժողովի կողմից ընտրվեցիք Ամենայն Հայոց 130-րդ կաթողիկոս:

Ձերդ Սրբության գահակալությամբ նոր էջ բացվեց Հայ Եկեղեցու, Մայր Աթոռի և մեր նոր օրերի պատմության մեջ:. Ձեր կյանքի իմաստը և գերագույն իդեալը դարձավ մինչև վերջ նվիրում Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդ-

ղին իրրև Լուսավորչի գահի գահակալ: Ձեր հայրապետական առաքելությունը ևս փառքով պսակվեց: Լավագույն ապացույցներն են հանդիսանում ձեռք բերված փայլուն արդյունքները հոգևոր, մշակութային, շինարարական, հայրենասիրական, միջեկեղեցական հարաբերությունների և վերջապես խաղաղության պաշտպանության ասպարեզներում:

Ձերդ Սրբության մեծագործությունները բոլորն էլ արտացոլում են Ձեր բարձր մտավոր մակարդակը և աստանչելի ճաշակը:

Վեհափառ Տեր, Կիլիկյան հայկական պետության անկումից հետո, անցնող ավելի քան 600 տարիների ընթացքում Դուք ասենաերշանիկ Հայրապետը եղաք, քանի որ գործելով հայ պետականության պայմաններում կարողացաք ոսկե կամուրջ ստեղծել Էջմիածնի, հայրենիքի և հայ սփյուռքի միջև: Գաղութից գաղութ այցի գնալով Ձեր հոտին, ինչպես լավագույն կերպով նկատել է Ձերդ Վեհափառությունը, «Առաջին անգամն էր, որ Հայոց մի Հայրապետ անտահման մխիթարություն ունեցավ ոչ թե հայրենիքին սպասնացող վտանգը ահազանգելու, այլ Սուրբ Էջմիածնից բերելու ուրախաբեր մեծ լուրը հայ հայրենիքի և ժողովրդի վերածնության»: Ձեր պատմական այցերով նոր կյանք պարգևեցիք Հոլման եղբոր կանգնած բազում հայորդիների: Ձեր տարածած վանեմ լուսն է, որ ջերմացրեց և կյանքի կոչեց բովանդակ հայության սրտերը ու անբակտելի կերպով շաղկապեց սփյուռքն ու Էջմիածինը և մայր հայրենիքը: Անհրաժեշտ է նշել, որ Ձեր պատմական ուղևորություններին նվիրված ծառայները, ինչպես նաև «Վազգեն Ա Հայրապետ Հայոց» հոբելյանական 4 գրքերը, Ձերդ Սրբության կոնդակների և քարոզների հետ միասին, վաղը մեծարժեք առաղձ են հանդիսանալու ինչպես հայ սփյուռքի, այնպես էլ Հայաստան—Սփյուռք կապերի պատմության համար:

Դուք մեծ հեղինակություն եք վայելում նաև միջազգային չափանիշով: Հայաստանում, Սովետական Միությունում և արտասահմանում արժանացաք պետական բարձր պարգևների: Ձեր կյանքի ժամանակագրությունը ուսանելի շատ բան ունի իր մեջ: Ձերդ Սրբության կյանքը, իրրև վարք հայոց մեծաց, գրոց հիշատակի բազում լուսավոր էջեր ունի արձանագրության արժանի: Անհրաժեշտ է նոր մի Օրմանյան, որպեսզի նոր ժամանակների «Ազգապատում»-ում պատշաճորեն արվագծի ձեր բովանդակ մեծագործությունների լրիվ պատկերը:

Թանկագին ուսուցիչ, Դուք այսօր ևս Էջմիածնի ճեմարանում մեծ եռանդով շարունակում եք Ձեր ավելի քան կես դարի մանկավարժական բեղմնավոր գործունեությունը, տակավին մենք մեկ հարցրեցինք պիտի, որ Ձեր ավագ աշակերտներից ենք եղել և՝ շատ վաղ հաղորդակից ենք դարձել Ձեր մաքրամաքուր հոգու անսպառ գանձերին: Այժմ Ձեր ավագ աշակերտներից ոմանք փորձում են գնալ Ձերդ Սրբության լուսավոր հետքերով. նրանք Հայաստանում, Ռումինիայում և երկրագնդի տարածքի տարբեր կողմերում իրենց մասնակցությունն են բերում հայապահպանման և հայ մշակույթի հարատևության վսեմ գործին:

Թանկագին ուսուցիչ մեր, Վեհափառ Հայրապետ, Բոխարեստի հայրենաբնակ և աշխարհի չորս ծագերում գտնվող Ձեր նախկին սաների կողմից ի խորոց սրտի կրկին շնորհավորում եմ Ձերդ Սրբության տարեդարձները և ամբողջ հոգով ցանկանում արևշատություն, երկար ու առողջ կյանք և նորանոր խիզախումներ Ձեր փայփայած բոլոր երազանքները ի կատար ածելու համար:

Հարգանք Ձերդ Սրբությանը և Ձեր մեծագործություններին»:

Անտիեան հաջորդաբար իրենց սրտի անկեղծ խոսքն ասացին Վեհափառ Հայրապետի նախկին աշակերտներից՝ Երևանի բժշկական ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի վարիչ Հակոբ Առաքելյանը, Հայկ. ՍՍՀ ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսյանը և ուրիշներ:

Հանդիպման ավարտին հուզումով և հոգեկան մեծ մխիթարությամբ նույն ունեցավ Հայոց Հայրապետը՝ իր գնահատանքն ու գոհունակությունը հայտնելով իր նախկին բոլոր աշակերտներին ցուցաբերված հարգանքի և երախտագիտական զգացումների համար, օրհնելով նրանց և մաղթելով քաջառողջություն, երջանկություն ու հաջողություններ իրենց անձնական և հասարակական կյանքում:

Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելուց առաջ ներկաների կողմից ցանկություն հայտնվեց, որ առաջիկայում Հայոց Հայրապետի հետ ավանդական հանդիպմանը ներկա գտնվեն նաև սփյուռքի տարբեր գաղթօջախներում, հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Արգենտինայում բնակվող Նորին Սրբության նախկին աշակերտաշակերտուհիները:

Հավատ ընդունելության Հայոց Հայրապետի նախկին սաներն այցելեցին Մայր Աթոռի «Այեր և Մարի Մանուկյան Գանձատուն»՝ ծանոթանալու ցուցասրահում դրված հայ եկեղեցական արվեստի հնագույն նմուշներին: